

# ՀԱՅԱՍՏԱՆ

## Գիտական կենտրոնի երկրորդ ծնունդը

*Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնը մեծ զարգացում է ապրում նոր տնօրենի ձեռքերում:*

Արարատի մարզի Դարակերտ համայնքի գիտական նշված կենտրոնում շատ բան է փոխվել այն բանից ի վեր, ինչ Գայանե Սարգսյանը դարձել է այդ կենտրոնի տնօրենը: **2006** թ-ին կենտրոնը գտնվում էր ծայրահեղ վատթար վիճակում, ուներ բազմաթիվ պարտքեր, զարգանալու շատ քիչ հնարավորություններ: **1983**թ-ից այս կենտրոնում որպես ասպիրանտ, իսկ այնուհետև գիտաշխատող տիկին Սարգսյանը հանձն առավ կենտրոնը նորից կյանքի կոչելու առաքելությունը: Դրանում նրան մեծապես օգնեց Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանի ՏՋՐից դեպի շուկա՝ բաղադրիչը, որն իրականացնում է ԷյՍԻԴԻԱյ/ՎՕԿԱ կազմակերպությունը:



Թաղարային սածիլ, որն արտադրվել է կենտրոնում:

Նախկինում կենտրոնին պատկանող ջերմոցներից, հողատարածքներից և լաբորատորիաներից մնացել էր ընդամենը **21** հեկտար հողատարածք բաց դաշտում և մի քանի խարխուլ սածիլանոցներ: Վերջիններս այն աստիճան ծայրահեղ վիճակում էին, որ սածիլներով չէին կարող ապահովել ոչ միայն ֆերմերներին, այլև սեփական հողատարածքները: Անհրաժեշտ էր վերանորոգել, կարգի բերել այն սածիլանոցները, որոնք կենտրոնին կարող էին ապահովել որոշակի եկամտով: ՏՋՐից դեպի շուկա՝ ծրագրի ՏՋՐի ներտնտեսային կառավարում՝ և ՏԲարձրարժեք գյուղատնտեսություն՝ բաղադրիչները մեծապես աջակցեցին կենտրոնին, մասնավորապես վերականգնեցին սածիլանոցները և տեղադրեցին միկրոանձրեացման համակարգ: Ռոռզման ջրի ճիշտ պլանավորման համար կենտրոնին տրամադրվեց երկու խոնավության տվիչ, մեկ չափիչ և գումարային գոլորշիացման չափիչ, իսկ բաց դաշտում ոռոգումն ավելի հեշտորեն կառավարելու համար նաև **3** շյուղներ: Դաշտում ոռոգման ջուրն ավելի հավասարաչափ բաշխելու համար ՏՋՐի ներտնտեսային կառավարում՝ բաղադրիչը լազերային հարթեցուցիչով հարթեցրել է նաև **0.5** հեկտար հող բաց դաշտում:

**Եթե 2007 թ-ին կենտրոնն արտադրել էր տարբեր մշակաբույսերի 300000 սածիլներ, ապա այս տարի այն արտադրեց մոտ 2 միլիոնից ավելի սածիլներ, որից 1 միլիոնը վաճառեց Եվրոթերմ ՄՊԸ-ին, «Ալիշան» պահածոների գործարանին ու բազմաթիվ այլ ֆերմերներին:**

«Բարձրարժեք գյուղատնտեսություն | բաղադրիչի աջակցությամբ կազմակերպվեց նաև սածիլների արտադրությունը սածիլանոցներում, դրանց տեղափոխումը բաց դաշտ, բաշխումն այլ ֆերմերների միջև: *«Ֆերմերները դժվարանում են այս կարգի բարձրորակ սածիլներ արտադրել: Իսկ մեր կենտրոնն արտադրում է ոչ միայն բանջարեղենի տարբեր տեսակների սածիլներ, այլ նաև թաղարային սածիլներ»*, - նշում է տիկին Սարգսյանը:

**Սածիլների արտադրություն պոլիէթիլենային թաղանթով ջերմատներում**

2008թ-ին «Ջրից դեպի շուկա | ծրագրով Հայաստան ներմուծվեցին մի քանի պոլիէթիլենե թաղանթով ջերմատներ, որոնցից երեքը տեղադրվեցին կենտրոնի հողատարածքներում: Դրանք կծառայեն որպես սածիլանոցներ ու ֆերմերներին սածիլներով կապահովեն ամբողջ տարի: *«Ամեն ինչ արվում է ի շահ ֆերմերների, որովհետև այս կենտրոնն այժմ*



**Սածիլանոցում տեղադրված միկրոանձրեացման համակարգ:**

*հանդիսանում է բանջարաբուստանային մշակաբույսերի գծով*

*հանդիսանում է բանջարաբուստանային մշակաբույսերի գծով*

*հանրապետությունում միակ գործող օղակը»*, - ավելացնում է տիկին Սարգսյանը: Կին դեկավար ունենալով հանդերձ կենտրոնը սերտորեն համագործակցում է կին ֆերմերների հետ: Դրա լավագույն օրինակն է հանդիսանում Լոռվա մարզի Գարգար գյուղի կին ֆերմերների աշխատանքը, որոնց այս տարի կենտրոնն ապահովել է սածիլներով: Կենտրոնն իր ջերմոցներում փորձարկում է նաև բանջարաբուստանային մշակաբույսերի ու ոչ ավանդական մշակաբույսերի նոր սորտեր: Ոչ ավանդական մշակաբույսերի նկատմամբ հետաքրքրությունը գնալով մեծանում է ֆերմերների շրջանում.



**Ոչ ավանդական մշակաբույսերի պահածոներ:**

Դրա տարածմանը մեծապես նպաստում է կենտրոնը՝ ֆերմերներին անվճար հիմունքներով տրամադրելով խորհրդատվություն, հատկապես ոչ ավանդական մշակաբույսերի մշակության վերաբերյալ:

Դրան ի հավելումն, կենտրոնը տալիս է ցանկացած նոր տեսակների վերամշակման գնահատական: *«Մենք պետք է ֆերմերին առաջարկենք ոչ միայն նոր սորտեր, այլև տեղեկացնենք, թե որ պահածոների գործարանում կարելի է վերամշակել իրենց արտադրած ապրանքը»*, - կարելորում է տիկին Սարգսյանը: Ըստ նրա, ագրարային ոլորտի զարգացումը պետք է ունենա եռանկյունու տեսք. Գիտական կետրոնները սերմով եւ սածիլով ապահովեն ֆերմերներին, իսկ ֆերմերներն արտադրեն եւ հումքով ապահովեն վերամշակման գործարաններին:

**Սածիլների արտադրություն Շովազարդում**

«Ջրից դեպի շուկա | ծրագրի շրջանակներում տիկին Սարգսյանի հսկողությամբ եւ խորհրդատվությամբ սածիլների արտադրության սկիզբ դրվեց եւ Գեղարքունիքի մարզի Շովազարդ գյուղում: Ջերմատանը, որտեղ տեղադրվել է շարժական միկրոանձրեացման ռոտաման համակարգ, արտադրվեցին բանջարեղենի տարբեր տեսակի սածիլներ եւ բաժանվեցին Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռվա, Արարատի մարզերի ֆերմերներին: Տիկին Սարգսյանի ներդրումն այս ծրագրում չափազանց մեծ է: Նրա անշահախնդիր խորհրդատվության շնորհիվ ծրագիրն աննախադեպ հաջողություն է ունենում: *«Եթե Արարատյան դաշտավայրում յուրաքանչյուր ֆերմեր գիտի, թե ինչպես աճեցնի պոմիդոր, վարունգ, ապա նախալեռնային ու լեռնային գոտու ֆերմերների համար դա նոր փորձ է»*, - նշում է տիկին Սարգսյանը: *«Ես ինքս լավատես եմ ու լիահույս, որ մեր խորհրդատվության միջոցով այս շրջաններում նույնպես կմշակվեն տվյալ բանջարեղենները»*:



**Շարժական միկրոանձրեացման ռոտաման համակարգ:**

**Բանջարեղենի սածիլներ:**